


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ԹՈՐՈՏՏԻԱՆ

Նամակ կամ սր եւ է  
զրու թիւն պետք է ուղղել առ  
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ յազրի  
ԳԱՀԻՐԷ (Նահակաստի)  
Թիւ.

E. TOROSSIAN  
Direc.- propr. du journal arménien  
ARCHAËLOUICE  
LE CAIRE (EGYPTE)  
Boîte Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԻՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե.Կ.ԳՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դասկին.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան ծրանք	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խմբագրութեան վրայ է.

Խմբագրութեան ուղղութեամբ  
գրութիւնք և չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ վճարելի են

ՆՈՐԱԿԱԶՄ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
«ԱՐՇԱՆՈՅՍ»  
ՀԻՄՆԵՍԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԱ ԱՄՏԻՒՄ ԱԶԻՋԻ ՍԿԻՋԸ  
Օտնանիքի դեղատանիքի դիմացի փողոցին մէջ.

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առա-  
ւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 :  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր  
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ,  
կ'ընդունուին.

Այցեխարտեր, Երջարտարաններ, Գիրքեր,  
Հրատարակութիւններ, Մանկագրքեր, Տեղեկագրքեր,  
Կանոնագրքեր, Տոմարներ և այլ և այլ վաճա-  
սականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագրութիւն և  
չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆՈՒԿ ԵՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս ծանուցած ենք մեր Բ. րգ.  
վեցամսէի սկիզբը, «Արշալոյս» թերթի նիւ-  
թական և բարոյական պատասխանատու-  
թիւնը մենք ստանձնած ենք:

Մեր թերթի այս անդամուան կարծ  
ընդհատուածին վերջ, երբ կ'սկսինք դարձեալ  
անոր հրատարակութիւնը ՆՈՐԱԿԱԶՄ ԺՈ-  
ՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, պէտք կը հա-  
մարինք անգամ մը եւս յայտարարել թէ՛  
այն ամեն բաժանորդներն, որոնք թերթիս  
հրատարակութեան սկիզբներն տարեկան  
վճարում ըրած են, մենք իրենց թերթերը  
անթերի կերպով պիտի ղրկենք իրենց հաս-  
ցէին, նոյն իսկ այս միամսեայ դադարման  
առթիւ պակաս ստացուած թերթերն:

ԿԱՐՃ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

ԱՐՇԱՆՈՅՍԻ սակաւօրեայ ընդհատումը՝  
եղիպտահայերուն խօսակցութեան բաւական  
պառաւ նիւթ մատակարարեց:

Էօթէն Սիւ, Աղէքսանդր Տիւմա, Տիւմա  
Որդի և ուրիշ պատմաբաններ ու նշանաւոր  
հեղինակներ քանի մը օր դադար առին Ե-  
ղիպտոսի համար, եթէ արդէն դադար չ'էին:

Հազար և մէկ գիշերներէն շատ աւե-  
լի ընդարձակ առասպելներ յերկրուեցան:

Շատերը արդէն ասկէ մնամաւոր շահ  
մը կ'ակնկալէին. և այդ պատճառաւ քիչ մը  
աւելի իւր գրած էին իրենց բամբասանք  
կզակներուն: Այդպիսեայ գերը միշտ մու-

թին մէջ էր՝ ու անկէ ալ դուրս ելնելու յա-  
ւակնութիւնը չ'պիտի ունենար երբէք—վա-  
սին զէնքը քառթիւնն է . . . .

Հիմա կ'արժէ որ այս կարծ ընդհատու-  
մին վրայ համառօտակի բացատրութիւն մը  
տրուի:

ԱՐՇԱՆՈՅՍԻ երեւումը շատերուն համար  
ախորժելի չ'երևաց առաջին օրէն իսկ: Ձէն-  
քերը սրուեցան. հզօր կարծուած յարձա-  
կումներու — միշտ դադարի և մ'թուփեան  
մէջ — տեղատարափը վհատեցնել ուղեց Ար-  
շալոյսի ընթացքը: Նիւթական տագնապ յա-  
ռաջ բերել ուղեցին շարամիտները. այդ-  
զէնքը շատ անգոր եղաւ բարեբաղդաբար  
թերթի վարչութեան անդամոց ոմանց հաս-  
տատուն քայլերուն առջև:

Մէկ մ'իւրթարութիւն և յոյս մնացած  
էր միայն Արշալոյսի հակառակորդներուն  
համար. այն էր՝ գտնել անոր վարչութեան  
մէջ մէկը, որ գիւրաւ համոզուէր իրենց, և  
նոյնպէս ալ հաճոյակատար լինէր վրասելու  
միջոցը ըլլալու համար անոր հաստատուն  
ընթացքին:

Գտնուեցաւ այդ. քանի մը յանձնարա-  
րութիւններ, առատ վճարք ու ամեն բան  
կարգադրուած կարելի էր համարել:

Արշալոյսի հակառակորդները սակայն,  
մէկ բան մտածելու մէջ չափազանց անկա-  
րող գտնուեցան, այսինքն թէ՛ իրենց նպա-  
տակը ինչպէս պիտի կրնային ծածկել այն  
աչքերէն՝ որ ամեն ուրեք Արգոսի նման  
գիտէր հետեւիլ իրենց շարժումներուն:

Ահա թերի մը՝ որը ուղղելու համար  
բաւականաչափ խելքի պէտք ունէին «Արշա-  
լոյս» ի խաւարաւիս հակառակորդները:

Եւ այսօր մտտերնին կը խածնեն այդ-  
պիսիք, աւսնելով որ թերթը իր սեփական  
նոր Տպարանն ալ կազմած է, և իրենց մէկ  
յուսահատական ծրագիրն ալ նեղօսի յարձա-  
նուտ ալիքներուն խաղալիքը կը դառնայ :  
Միամիտներ . . . .

Արշալոյս վերստին կ'սկսի հրատարակ-  
ուել այս թիւէն, նա կը խոստանայ իւր  
բաժանորդներուն վճարել այն բոլոր թեր-  
թերը որ իւր կարծ ընդհատումին պատճա-  
ռաւ չ'կարողացաւ տալ իրենց :

Ինչու կ'սկսած էր պատճառ մը չ'կայ  
այլևս թէ՛ թերթի հրատարակման մէջ ո'ն է  
անբանաւոր ընդհատում կամ այլ ինչ տե-  
ղի կ'ունենայ:

Այս կ'սկսածը որ Արշալոյսի երեւումէն  
առաջ և ետքը տիրած է շատերուն մտքին  
մէջ, մենք պիտի փարատենք երկու միջոցնե-  
րով. նախ՝ յարատուելով մեր ընթացքին մէջ  
առանց երբէք ընդհատումի և երկրորդ՝ փա-

փաքելով այժմէն արժանանալ այն կատար-  
եալ վստահութեան, որ մեր բաժանորդներն  
պարտին ցոյց տալ դէպի մեզ :

Թէ ինչու ընդհատուեցաւ «Արշալոյս»ը  
չատեր ընկանաբար կ'ուզեն գիտնալ :

Եթէ մեր տուած համառօտ բացատ-  
րութիւնը արդէն չ'զոհարեցէր զիրենք, մենք  
չենք կարող մեր թերթի սեփակաները ատոնց-  
մով ընկնել, այդպիսիները պէտք է սպա-  
սեն ապագայի. մենք ինքնին պիտի փափա-  
քինք յատուկ տնտրակով մը երեւան բերել  
այն ամեն թոհ ու բոհերն՝ որ կուտակուե-  
ցան մեր քայլերուն առջև այն օրէն, երբ  
Արշալոյսը հրապարակ հանելու երջանիկ դա-  
ղափարը ունեցանք:

Առ այժմ այսպիսի մեր թերթի բարե-  
կամները անկասկած կրնան մտածել թէ՛ այլ  
ևս թերթին ներկան ու ապագան փրկուած  
է ամեն վտանգներէ և հրատարակութիւնն ալ  
հաստատուն կուտանի մը վրայ հաստատուած.  
Իսկ մեր քոտ, աղտոտ և անհամարձակ հա-  
կառակորդներուն կը թողունք նոր բան մը  
մտածել ականջներէ վար փափոտու համար.  
մենք այդ կարգի քոտութեանց և անոնց հե-  
ղինակներուն վրայ կոխտեղով գիտենք  
չարունակել մեր ուղին. ուղի սրուն մէջ  
մեր չ'յոգնիլը փորձեցին մեր կեղտոտ ու ան-  
պիտան հակառակորդներն անգամ:

Ե.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱԳԱՐԷՆ ԻՎԵՐ

Ի՛նչ ամեն մ'արդ դատաւոր եղաւ. ամենն ալ  
վճիռներ արձակեցին. խելահասն ալ կապեց ու  
քակեց, միամիտն ալ. իսկ անխելքը ոչ մէկին  
կարգ թողուց : Բայց թէ վճռելու համար ինչ-  
պէս դատաւոր կը լինին կամ ինչպէս Օրէնքը  
իւր հօր ազդեցութիւնով կը խոնարհեցնէ մեղա-  
ւորն ալ անմեղն ալ : Գուցէ շատ քիչքը այսքանը  
գիտեն, եւ եթէ ուզէին աւելին գիտնալ պէտքէր  
գէթ անգամ մը կարենային մտածել թէ՛ ինչպէս  
մ'արդ մը դատաւոր կրնայ լինիլ :

Մեր մէջ Օրէնքը այսքանէ աւելի հզօր ներ-  
գործում մը պիտի ունենար, եթէ ամեն մ'արդ  
բոլորն ալ ըլլար անոր բարոյականութեան վրայ  
թողած իսկական նշանակութիւնը :

Ճշմարիտ է թէ Օրէնքը կուզայ մեր ուղին  
եւ մեր ընկերական իւրաքանչիւր պարտակա-  
նութեանց ճանապարհը ճշդելու. սակայն մենք  
Օրէնք ընկելով կ'ըմբռնենք վճիռ մ'ը տալու եղա-  
նակը՝ լոկ մեր ընդունած ու գիտցած ձեւովը.  
մինչդիռ գլխաւոր բանը որ կը պակսի մենն,  
սա է թէ՛ ինչո՞վ է դատաւոր դատաւոր եւ ամ-  
բաստանեալը ամբաստանեալը :

Հարցումը ինքնին թէ՛ շատ պարզ է, ու-  
կայն պատասխանն ալ ոչ այնքան անկարեւոր :

Գատաղը իր անաչառ ոգևոլին է գատառոր-  
իսկ ամբաստանեալը իր գործած յայտնի մեղքե-  
րովը մեղաւորը Հեռեւարար գատաղու համար  
պետք է մտիկ ընել, եւ գատառտան մը արդար եւ  
օգտակար ընծայելու համար, երկու կողմն ալ  
լսել Ստեփան ասպէ՛ն եւ արգեօք մեր գա-  
տառտանները . . .

Արշալոյսի այս ժամանակաւոր գաղափարում էն  
իվեր անոր չուրջը գործող գատառտանական երե-  
ւոյթները զիս չափազանց հեռաքրքրեցին. այս  
բոլոր մտածումներն ու համոզումները մեր արդի  
ընկերական մտային կարողութեանը վրայ, եթէ ոչ  
վճարական, գէթ սկզբնական սա գաղափարը տուին  
ինձի թէ, մենք դեռ ճշմարտութիւն մը յերեւան  
հանելու համար նախնական շահարժեղտ կարեւ-  
որութիւնները գէթ ուսած ու սերտած չենք, եւ  
այս մեղ համար այնքան մեծ սխալ մ'է, զոր շատ  
անգամ կը գործենք ուղղակի մեր սիրած կամ  
չսիրած անձը սոսնակութեամբ կամ արատաւորե-  
լու համար Սարգիսի անխղճութեան մէջ ո'րն  
է աւելի քստմնելին՝ քան այն որ երբեմն իզոթ  
կը դնենք՝ անհրաժեշտ ճշմարտութիւն մը նոյն  
իսկ ստութիւններով խախտելու համար:

Ամենքս ալ գիտէինք թէ հոս՝ Գահիրէի հա-  
յոցս հաւեր թերթ մը ունէինք. որուն յոչլամն  
ունեցած մի փոքրիկ գաղափար իւր մեկնութեանց  
տիւր տպաւորութիւնը պիտի ունենար, ինչպէս  
որ ունեցաւ Ստեփան մեղաւորը. Ոչ ոք, եթէ  
ոչ գատառտանը՝ որուն հաւեր վճարողը դաս-  
ւորները անաչառութեն չ'ընեցին Օրէնքը իրենց  
կուրծքին, մեկնելու հաւեր մեղաւորին ալ անմե-  
ղին ալ գործերը:

Արշալոյսը եւ իր նախկին սպարանը բնաւ-  
նի դրացիներ էին, որոց ձեռք շատ փոքր ժա-  
ւանակ մը յարատեւելէ յետոյ, մէկ դրացին չ'ըն-  
տածեց ա'յնքան որքան կը մտածէր միւսը. Այս-  
չափ ժողովրդական հաւակրանաց արժանացած  
թերթ մը՝ գէթ Գահիրէի հաւեր, աւելի հաստա-  
տուն պահելու հիւճեքը չ'փնտոտեցան այն ատեն.  
եւ վերջ իվերջոյ մեր երբեմն միտմտ գատառոր-  
ները իրենց գատառտանովը վճարեցին. բայց իրա՛ւ  
էին արդեօք առթիւ մը պիտք է քննել այդ բոլորը  
այն ատեն իրաւունք վաստկողի առնաբնական  
սպացոյց տուողը կը լինի այսօր մեզ առջնոր-  
դողը. այսինքն, նոր ժողովրդական Տպարանի  
հիմնադրելու Այսուհետեւ Արշալոյսը անկէ պիտի  
ծագի, ի հարկէ աւելի կանոնաւոր եւ ընթացիկ  
իւր յարատեւութեանը մէջ. իր յարգելի Տնօրէն  
Մեղադրին անուրանալի զո՞ղութիւնները, ար-  
գարեւ մեծ վատահոլութիւն մը բերին իր ունեցած  
հօր եւ անպարտելի կառքին հաւեր հանդէպ իր  
սկսած գործին ի գլուխ ելնելուն. որուն աւելի  
եւս փայլուն ու յաղթական գնացքը անշուշտ  
նոր քաջալերութիւններով պիտի զօրանան:

Ասկէ անգին Արշալոյսը իր ցոլքերը պիտի  
ունենայ. ինչպէս Առաւօտը կ'ունենայ իր Օրե-  
ները:

Ինչ կ'ընէ գէշ դրացին, հարցուցած է ժողո-  
վրդական առածը . . .

Իրա՛ւ, տեղեկութիւններու կառ լուրերու  
այսքան սովէն յետոյ հրապարակային նորու-  
թեանց մէջ տեսութիւն մը ի հարկէ ոչ նուազ հե-  
տաքրքրական պիտի լինի նոյն թերթի ընթեր-  
ցողներուն, այդ պակասի լրեան մէջ թերեւս մի  
քիչ աւելի ուշացայ. Բայց պետք է որ հաւեր-  
րատար լինինք:

Չատկական աւուրց մէջ ժողովրդական ա-  
ռատաձեռնութիւնը ճշմարիտ հաւատոյ ներշնչու-  
մով մը զօրացուցած էր սրտերը. տե՛ն կողմէ  
տուէ՛ք, աղաղակը կար, իսկ չ'առուող բնաւ չ'կար.  
Բնդհանուր շարժման մէջ առանձին ոգեւորու-  
թիւն մը կար. որք գրեթէ հասած էին իւրաքան-  
չիւրի կամ խանութի գարակին բանալիներն  
եւ կառ իր ունեցած մէկ անշարժ կայուածի  
Հե մերթն:

Որբասիրաց ընկերութեան թատերական  
յաջողութենէն յետոյ կարող Ակնցիներու Որբու-  
րու ընկերութեան եկած էր. որոց ընենք չընենք  
անգոյն որոշումները վերջնականապէս լուծուելէ  
յետոյ հաւերաւոր փաստաւորաձեռնութեանը մէջտեղ ելած  
էր ինչպստ իրեն կողմը ներկայացնելու Օրբայի  
մէջ. Մի քանի բարեխիղճ անձանց ձեռնառու-  
թիւնը շատերը հաւատացուցած էին թէ մեծ ա-

ջակցութիւն մը կը նուիրուի ծանօթ ողբերգուին.  
Քանի մը օրերու իրարանցումէ յետոյ վճար-  
կան ժառը հասած էր. Բայց Օրբայի զգալի  
ամառութիւնը յուսարեկ բրած էր թատրոնի հե-  
րոսին սգեւոր թաղութիւնը . . .

Կը մնար Տիկին Մարի Պէնիանը, իր հուա-  
տոյ, յուսոյ յաղթանակովը անյօտ մ'ալ մեր ժողո-  
վրդեանը երեւալու: Ստեփան մեր ժողովրդի ան-  
քաջալեր վերաբերումը գէպի քաջածանօթ դերու-  
սանուհին, դաժնալ յայտնի եղած էր. հակառակ  
Պէնիան խնդրի արեւնափայլուն յաջողութեանը,  
որ անգամ մ'ալ իյայտ կուգայ հաւատքի եւ յուսոյ  
քրիստոնէական մեծ ճշմարտութեանը վրայ:

Որբերու ընկերութիւնները աննոյ չ'էին.  
ասոնցմէ մին վասպուրականի հետ մէկ սիրտ մէկ  
հոգի վիճակահանութեան տոններու սպառնան  
տուէէ էին. Փայով Որբասիրացին՝ իր թատերա-  
կան յոգնութենէն յետոյ, անխոնջ եւ ժրջան  
Ատենապետը՝ մէկ կողմէն հաշիւներովը զգաղէր,  
իսկ միւս կողմէն Ազգային Առաջնորդարանովը,  
որ կը յայտարարէր իրեն զրկուած կանոնա-  
գրին վաւերացման որոշումը:

Որբասիրացին թատերական հասոյթէն գու-  
մար մը առ հաշիւ կ'ըստի Որբանոցին զրկու-  
ած էր, մինչդեռ նոյն հաստատութեան հաւեր մէ-  
կալ ընկերութեան կողմէ խոստացուած գումարի  
մը վճարմանը կը հակառակէր վասպուրականի  
Որբայինստը:

Այս բոլորէն վերջը կուգար Լսարան Ընթեր-  
ցարանի գաղանի շարժումները. որուն վարչ-  
ժողովոյն մութ սայլին վրայ, ամեն օր լուիկ  
մեջիկ կը ծծուէին նորանոր կառնասեղծ որո-  
շումներ Լսարան Ընթերցարանի յարատեւութիւնը  
թերթի մը չնչն կախում կ'ընայ ունենալ եղեր.  
եւ սրոյ վարիչ մարմնոյն ընտրութիւնը արդէն  
իսկ կատարուած էր. Արշալոյսի աչքը լսյո,  
աստուածոց աստուածը այսպէս շուտ իրեն երե,  
իսկ մը պարզեւելուն հաւեր, այդ թերթի նպա-  
տակին հաւեր աւելուրդ է բան մը ըսել, ինքնին  
շատ պարզ է. սա իրաւ է թէ՛ Լսարան Ընթեր-  
Ընթեր. Ընդհ. ժողովոյ գիււանի հաւակրելի Ատե-  
նապետը հրաժարած է. եւ եթէ լսածնիս իրաւ է  
Պործ. ժողովը արգելք կ'ըլլայ եղեր Ընդհ. ժո-  
ղովի մը գումարումին, հակառակ դաս մը բն-  
կերներու բողոքին եւ պահանջմանց:

Ասկէ անգին ինչք' կ'ընային պատահիլ եւ  
պիտի պատահին այժմէն չէ կարելի բան մը ըսել.  
պետք է սպասել զէպերուն եւ զայն կարգաւո-  
րող առնանշանաւոր գիււանագէտներու մտա-  
ծումներուն:

Ա.Ի.Ս

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

ՄԱՅԻՍ ԱՄԻՍԸ ՓԱՐԻՉԻ ՄԷՋ

Փարիզ, 15 Մայիս

Մենք շատ անգամներ առիթ ունեցած  
ենք ըսելու թէ Փարիզու օգը տեղւոյն բնա-  
կիչներուն նման թեթեւօլիկ է. գարնան ա-  
մրաներէն մայիսը՝ որ ամեն երկրի մէջ գե-  
ղեցկագոյն ամրաններէն մին է ամենաբանաս-  
տեղծականը կը համարուի, այս տարի Փա-  
րիզի համար գոնէ մ'ընչե այսօր — ամենէն  
տխուրն եղաւ:

Նախ՝ մայիսը սկսելուն պէս երեք չորս  
օր շարունակ առատ անձրեւներ տեղացին.  
այնպիսի անձրեւներ որ մարդ կը կարծէր թէ  
երկինքը պատուած է, անընդհատ հեղեղի  
նման կը տեղար անձրեւը: Յետոյ յանկարծ  
սկսաւ ցուրտ ընել. այնպիսի ցուրտ մը՝ որ  
ձմեռուան վերջին ամսոյն մէջ ալ տեսնուած  
չ'էր: Յետոյ փոխելու համար, երեք չորս  
օրերէ իվեր սաստիկ հով մ'է որ կը փչէ Փա-  
րիզի վրայ, ծխնելոյզներու խողովակները եւ  
ուրիշ օգին մէջ գտնուող իրեն փողոցները  
թափելով: Փողոցին մէջ գլխաթիկներ՝ կըր  
բարձր, խսիրէ, կակուղ եւսյն իրար կ'անցնին  
հովէն տարուերուելով. . .

Արդէն մայիսի կէսն ենք եւ գեւ մայիսի

գեղեցկութիւնները չ'տեսանք, ամեն օր նոր  
բաներ կը տեսնուին, բայց ոչ մայիսին յատուկ  
բաներ, գեւ մ'ի գիտէ ինչք' պիտի պատա-  
հին, մենք բնաւ չ'պիտի զարմանանք եթէ  
այսօրերէն մէկը՝ առտուն արթնալով գե-  
տինը ձիւնով պատած տեսնենք. . . Փարիզի  
մէջ՝ ամէն բանի սպասելու է:

Ս. ԴԱԻԹ ԲԷԿ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԻՔ

ԿԻՊՐՈՍԻ ԿՐԹԱՐԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ ՅՈՒՑԱԿ Գ

Որբասիրաց Ընկերութեան Պատ. Գոր-  
ծադիր ժողովը, Կիպրոսի Կրթարան — Որ-  
բանոցին ինչպստ եղած նուիրատուութեանց  
զանձման հետեւալ ցուցակը զրկած է մեզ  
ի հրատարակութիւն:

Ա. Յուցակի գումար զր. ողջ	2147	50
Կ. Տիար Գրիգոր Նիկողիմոս- եան (Աղեքանդրիա)	97	50
» » Ստեփան Յովհաննէս- եան (Մինեէ)	100	
» » Ոմն ընկալազ. թ. 44	97	50
» » Ոմն ընկալազ. թ. 49	20	
» » Ս. Օտապաչեան	50	

Գումար զրջ. ողջ 2512 50  
Ի գիւմայ Գործ. ժողովոյ Որբասիրաց Ընկե-  
րութեան Հայոց

Վ. Ատենադպրի Ատենապետ  
Կ. ԵՐՁՆԿԱՑԵԱՆ Ա. Մ. ՊԵՊԵՐԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս գիտենք, նորին Բարձրութեան՝  
Խոնիին Անգղիա ընելիք ճամբորդութիւնը  
այսօրուան համար որոշուած էր:

Այժմ նորին Բարձրութիւն այս մեկնումը  
մէկ քանի օր եւս յետաձգել որոշած է,  
նախագահելու համար նախարարաց ժողո-  
վին՝ որ տեղի պիտի ունենայ մասոյս 29 ին,  
Ռաս-էլ-Թիխի մէջ:

Նորին բարձրութիւն առաջիկայ հինգ-  
շաբթի կամ ուրբաթ Մանսուրա՛ շոգեհաւով  
պիտի մեկնի:

Նախարար ժողովին մէջ Բարձր. Խոնիվը  
պիտի որոշէ իր մեկնման ճիշտ թուականը  
եւ պիտի հրատարակէ զեկուցագիրը, որով  
Մուսթաֆա Յէհմի եւ Ֆախրի Փաշաներուն  
պաշտօն պիտի արուի, նորին Բարձրութեան  
բացակայութեան ատեն երկրին գործերը  
վարելու համար:

— Խարթուով մէջ Չորավար Կորտնի յի-  
շատակին նուիրուած արձանին յինութեան  
ի նպատ, Լոնտոնի մէջ «Մօրնիկ Փոսթ» ի  
կողմէ բացուած հանգանակութեան գումար-  
ըր 1300 Անգլ. ոսկիի հասած է եւ գեւ 700  
ոսկի եւս պիտի հանգանակուի այդ նպա-  
տակին համար:

— Ոստիկանութեան կողմէ ներկայա-  
ցուցուած տեղեկագրոյն համեմատ, Աթա-  
պա-էլ-Խատրայի հրապարակին վրայ անց-  
եալ Ուրբաթ երեկոյ ծագած հրդեհին պատ-  
ճառած վնասները 2420 ոսկւոյ կը հասնի:

— Պարսկաստանի գիււանադիտական գոր-  
ծակատար Է. ընդհ. Հիւպատոս Միրզա Ֆա-  
րակալահ խանի ամուսնութիւնը Յունիս  
ամսոյն Փահիրէի մէջ պիտի կատարուի:

— Այսօրուան պաշտօնական գեկուցը կը յի-  
շատակէ Բորթ-Այլիտի մէջ ժամտախտի նոր  
գէպը մը, տեղացիի մը վրայ հաստատուած  
որ իսկոյն հիւանդանոց փոխադրուած է:

Հիւանդանոցին մէջ գեւ կը մնայ 11 հիւանդ, որուն Յը Եւրոպացի և Տը անգլացի է:

Աղեքսանդրոյ մէջ ո և է գէպը պատահած է:

Մինչև վերջին շաբաթ 21 մայիս Պոմպէյի մէջ 251 ժամապատի նոր գէպը և 250 մահ պատահած է. իսկ անցեալ շաբաթուն մէջ 327 գէպը և 322 մահ:

Դատական նախարարութիւնը որոշած է, տեղական գատարաններու աշխատութիւնները գաղթեցնել յուլիս 15էն մինչև սեպտեմբեր 30:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ ԹՐԱՆՍՎԱԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Լորէնսո — Մարքէզէն «Թայմը» ի կը հաղորդեն Մայիս 16 թուականու թէ՛ Բրէթորիայի մէջ միմիայն նախագահ Բրիւկէրի յառաջիկայ մեկնման վրայ կը խօսին. կառավարութեան կեդրոնը Լիտէնպուրկ պիտի փոխադրուի. կըրուի թէ՛ Խորհրդարանը փոխադրման ծրագիրը ընդունած է: Շատ մը պաշտօնատարներ կը պատրաստուին քաղաքը թողլու. Կըսեն թէ պետական քարտուղար Պ. Բէյց Հարաւային Ամերիկայ պիտի երթայ հոն հաստատուելու մտադրութեամբ: Երկու ամիս առաջ գրամ կարուած ոսկիի գումարներուն փոխարէն կառավարութեան պանքաներու բրած ոսկիի ձոյլեր յանձնելու խոստումը չէր պահպանուած:

17ին միւսնոյն թղթակիցը կը հեռագրէ Թայմին:

Այլեւս սարակոյս չկայ որ Թրանսվալի կառավարութիւնը կը պատրաստուի կառավարութեան կեդրոնը Լիտէնպուրկ փոխադրել ուր գերագոյն գիմագրութիւն մը պիտի ընէ: կը հաստատեն թէ Խորհրդարանը ընդունած է այս առաջարկութիւնը և շատ մը պաշտօնատարներ մայրաքաղաքը ձգել կը պատրաստուին:

Պ. Միքայէլ Դաւիթ, Թրանսվալէն Լորէնսո — Մարքէզ հասած և Թրանսվալի հիւպատոսարանին պաշտօններէն միոյն կողմէ ընդունուած է. պատերազմը գործնականագէս վերջացած կը նկատուի:

ԻՏԱԼԻԱ. — Քաղաքային ամուսնութիւն Իտալիոյ մէջ. — Երբեք չընտրուած քանի օրերէ ի վեր ապօրինի ամուսնութեանց գէ՛մ եղած ծրագրոյն վրայ կը վիճաբանի: Երբեք չընտրուած ծրագիրներ ունի իր առջև. մին կառավարական ծրագիրը որով տուգանքներու կը դատապարտէ այն ամուսնները, որոնք իրենց կրօնական ամուսնութիւնէն քառասուն օր վերջ չ'են կատարել քաղաքային ամուսնութիւնը և կրօնական այն պաշտօնեաները որք իրենց կատարած ամուսնութիւնները կառավարութեան չ'են իմացներ:

Յանձնագրովոյ ծրագիրը կ'արգիլէ քաղաքային ամուսնութիւնէն առաջ կատարուած կրօնական ամուսնութիւնները և տուգանքի կը դատապարտէ օրինազանց գտնուողները. ըլլան քահանաներ. ըլլան ամուսնուի:

Վիճաբանութեան միջոցին, կրօնական գործոց նախարար Պ. Պօնասի յայտարարեց թէ՛ կառավարութիւնը տէրութեան և Եկեղեցւոյն բաժանման սկզբունքէն ներշնչուած է, որ աւելի լաւ կը համապատասխանէ այն բացառիկ պայմաններուն, որոնց

մէջ կը գտնուի Իտալիան հանդէպ կեղեցւոյ: Զօրավար Փէլլա յայտարարեց թէ՛ նախարարութիւնը համախոս է յանձնագրովին ծրագիրը պաշտպանելու:

Պ. Փաթերնաթրա, կառավարութեան ծրագրոյն առաջին յօդուածի մասին առաջարկութիւն մը ներկայացուց, ըսելով թէ՛ կրօնական ամուսնութիւնը պէտք է պարտադրիչ նկատել:

Կառավարութիւնը ինչպէս նաև Երբեք կոյտը գաղտնի քուէարկութեամբ, մերժեցին այդ առաջարկը:

Կառավարութեան ծրագրոյն առաջին յօդուածը վերջնականագէս ընդունուած է:

ՌՈՒՄԻԱ Ի ԳՈՐԷԱ. — Թայմը Վորէայի մէջ ի քրաս ձաբօնի Ռուսիոյ ձեռք բերած առաւելութիւնները մէջտեղ կը հանէ:

Մարտ 30ին երկու համաձայնութիւններ ստորագրուած են Պ. Բավլովի և Վորէական կառավարութեան կողմէ:

Այս համաձայնութեանց առաջին նախընթաց Վորէան Ռուսիոյ կը թողու Մազամփօյի մէջ ծովային հիւանդանոցի մը և ամուսնի միջերանցի մը շինութեան համար կարևոր տեղերը:

Երկրորդ համաձայնութեան նայելով, Ռուսիա կը խոստանայ երբեք հողեր ձեռք չ'անցնել ո՛չ Վօժէրօ կղզոյն մէջ, ո՛չ շրջակայ կղզիներու մէջ և ո՛չ ալ Մազամփօյի նաւահանգստին գէ՛մ գտնուած տեղերը:

Վորէական կառավարութիւնն ալ իր կողմէ կը խոստանայ այդ նշանակուած տեղերու մէջ Ռուսիոյ մերժած արածուութիւնները ուրիշ ո և է պետութեան մը չի շնորհել:

Պ. Բավլովը Վորէական կառավարութեան տեղեկացուցած է թէ Մազամփօ խաղաղական նաւատորմը կայանը պիտի ըլլայ:

Թայմը կը հաստատէ թէ Ռուսիան Վորէայի ամենադեղեցիկ նաւահանգստին տէրը կը ըլլայ և մի և նոյն ատեն ձաբօնին կ'արգիլէ շրջակայները ռազմագիտական դիրք մը գրաւելու:

ՉՄԻՒՆԻՏՈՅ ԴԷՊՔԸ. — Զմիւռնիայէն կը հաղորդեն մայիս 18 թուականու թէ՛ Տրեհիոյ, Փասթէօուեան հաստատութիւնէն որ Օսմանեան պագթէրիօլօթիք հաստատութեան Տնօրէնն է կ'ըսէ, թէ՛ Հրէայ ժիւտա Հատէյօյին ուսուցքին մէջ, համաճարակի պատիւը գտնուած է. Տր. Նիկոլ կը յանձարարէ Բարիդի Փասթէօուեան հաստատութեան հակահամաճարակային արեւնաչիւճուկը գործածել:

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 19 Մայիս. — Մէֆքինիկի ազատման համար եղած ցոյցերը ամբողջ օրը տեւեցին:

«Աւէսթ-միլիթար Կազէթ» կ'ըսէ թէ՛ անգլիական ազգին ուրախութիւնը սահման չ'ունի:

Միւնիխ 19 Մայիս. — Երկու հարիւր հազար Գերմանացիներու յիղմէ համակրական ուղերձ մը ստորագրուելով զրկուած է Պօէր պատգամաւորներուն:

Լոնտրա 21 Մայիս. — Թօթէնհամի մէջ՝ ամբողջ Գերմանացի սափրիչի մը խանութը խորտակեց և կրակի տուաւ, Պօէրներու համակիր ըլլալուն վրայ կասկածելով:

Լոնտրա 21 Մայիս. — Մէֆքինիկի ազատուիլը պաշտօնագէս հաստատուած է:

Սալոնիկի մէջ 21 Մայիս. — Սրտաքին գործերու պետական քարտուղար Պ. Հէյ, Պօէր պատգամաւորները ընդունեց: Այս տեսակցութեան միջոցին փոխանակուած խօսակցութիւններն գաղտնի կը պահուին:

Լոնտրա 21 Մայիս. — «Տէյլի կիւզ» կ'ըսէ. ամսոյս 20ին Լորէնսո — Մարքէզէն քաղաքը հեռագրի մը կը ծանուցանէ թէ՛ ամսոյս 17ին Անգլիական զօրագունքերը Մէֆքինիկը պաշարող Պօէր ուժերը գերի բռնած և անոնց հրետանիները գրաւած են:

Անգլիական զինուորներ ամսոյս 17ին Գլէրգաստորֆը գրաւած են առանց դիմադրութեան հանդիպելու:

Լոնտրա, 22 Մայիս. — Զօրավար Պուլլըր կը հեռագրէ թէ, Անգլիական հետեւակ զինուորաց գումարտակ մը Վալայի մտա գերի բռնուած է:

Բիւմբի, 24 Մայիս. — Սէրտարը հոս հասաւ:

Բրէթորիա, 24 Մայիս. — Պօէրի աշխակցականները կը պատրաստուին ազդու կերպով պարպել Յաննէսպուրկը:

Ժէրսէյ 25 Մայիս — Կղզւոյն մէջ հակաֆրանսական ցոյցեր տեղի ունեցան. անցեալ գիշեր ոստիկանները ստիպուեցան ցուցարարներուն վրայ կրակ ընել. երեսունի չափ ձերբակալութիւններ կատարուած են:

Լոնտրա 25 Մայիս. — Զօրավար Հընթթըրի զօրաբաժինը գրաւեց Վրիպուրկ երկաթուղեաց վերջին կէտը. Վրիպուրկը արեւմտեան գունդին գործողութեանց կեդրոնը պիտի ըլլայ:

Լորտ Ռոպըրթսի անձնական գործունէութիւնը զարմանալի է և առողջութիւնը միշտ բնական է:

Զօրավար Պուլլըր Լէնկուէթի բոլոր սիքը թնդանթիւնը տարաւ. ամենալուրջ պատերազմի մը կ'սպասուի:

### Ա Ձ Դ

Մեր թերթի հրատարակութիւնը առաջին առթիւ եթէ փոքրիկ թերութիւններ ունենայ, մեր ընթերցողաց ներողութիւնը կը խնդրենք:

Գիշտեանէն ամեն ինչ կանոնաւոր վիճակի մը վերածուիլը կ'ապահովենք:

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

### ՆՈՐՈՒԹԻՒՆ ՍԷ

Մինչև ցարդ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահածէ, որ հայ թերթերու վարչութիւնք մտածած ըլլան հաւարածոյներու վրայ:

Ստէպ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ թերթ կուզուի բաժանորդի մը կամ հաւարածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրեթէ գտնել անկարելի կը ըլլայ:

Մինք «Արշալոյս» ի հրատարակման առաջին օրէն, մեր սպասումին քանակը ինկատի ունենալով, քանի մը թերթ մասնաւորապէս հաւարածոյի հարար աւելի սպասելու տուած եւ ստացին վեցամսեայն կազմիլ տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փախաքին «Արշալոյս» ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան գիմել թերթիս ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ Լաթիկազիին համար 10 ֆրանքի գումարով զրկելով մեզ:

Իարձեալ արտասահմանի ո'ւե է թերթի բաժանորդ գրուիլ փախաքողներէն անոնք որ գրութիւնը չ'ունին անոնց խաբարութեանց հետ յարաբերութեան մասնելու, կրնան մեզի գիմել:

Աղեքսանդրիոյ ժողովրդային Մատենադարան Լսարանի Պատ. Վարչութիւնը, հետեւեալ յայտարարութեանէն օրինակ մը զըրկած է մեզ, զոր կը հրատարակենք, չտրհաւորելով Պատ. Վարչութեան այս յառաջդիմական քայլերն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղեքսանդրիոյ ժողովրդային ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԼՍԱՐԱՆ « հաստատութիւնը որուն նպատակն է հասարակութեան ՄՏԱՂՈՒ, ՔԱՐՈՋԱԿԱՆ և ԸՆԿԵՐԱԿԱՆ զարգացման նպատակը բացառած է ՄՕՆՖԵՐԱԺՕՅԻ շէնքին առաջին յարկին մէջ: ( նախկին Խառական քլիւպին տեղը ):

Այս զոյս ժողովրդական հաստատութիւնը իր նպատակին իրագործման շտաբին մէջ գնեւու և գայն անխտիր հասարակութեան ամեն խաւերու ժամագրովայն մը գարցնելու իր միջոց՝ հետեւեալ կարգադրութիւնները եղած են:

Գիրամուտելի գրքերու հատարածոյ մը պիտի գրուի հասարակութեան տրամադրութեան տակ: — Գրքերը գուրս ալ կրնան տրուիլ:

Ընթերցանութեան սրահին մէջ պիտի գտնուին Հայերէն օրագիրներ և հանդէսներ նաև օտար թերթեր ալ հաստատութեան նիւթական միջոցներուն ներած չափով:

Գիշերային և կիրակնօրեայ դասախօսութիւններ տեղի պիտի ունենան աւանդուելիք առարկաները առ այժմ՝ հետեւեալներն են: Հայերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն, Թուրքերէն, Տոնարակալութիւն և Գծագիրութիւն: ուրիշ գասեր ալ կրնան աւանդուիլ, երբ բաւական թուով փափաքողներ գտնուին:

Հաստատութեան մեծ սրահին մէջ ժամանակ առ ժամանակ տեղի պիտի ունենան ատենախօսութիւններ (Լսարան) Ազգային, Գրական, Գիտական և ուրիշ օգտակար նիւթերու վրայ:

Առանձին սրահ մը յատկացուած է կանոնադրին մէջ թոյլ տրուած խաղերու:

Հաստատութիւնը ունի նաև պիւֆէ մը սպորտ հասցիք պիտի ծառայէ Մատենադարանի զարգացմանը:

Հաստատութիւնը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան 11 րը:

Լիայրս ենք որ հասարակութիւնը սիրայօժար պիտի փութայ քաջալերել սոյն հաստատութիւնը որ կուգայ լրացնել զգալի պակաս մը Աղեքսանդրիոյ Հայ զաղութին մէջ:

Կնիք  
Վարչութեան

Ա. ՊԱՐՏԱՔ

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐՈՒՅՈՒՑՈՒՑԻՉ  
ՀԱՄՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԱՆՆԵՐՈՒԹԵԱՆՆԵՐ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ երկար տարիներ վերջիցեալ վիճակահանութեանց տամբերու ատենադրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ և կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերջիցեալ տամբերէն մեծ քանակութեամբ ապագրանք տուած է եւ յետ այսու մինչև ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ գներով պիտի վաճառէ:

Իրեն գիմող գնորդները կատարելագոյն գոհացնելու եւ մինչև ցարդ այս ատենադրին շուրջը տեղի ունեցած գեղեցիկութիւնները բառնալու համար մեծ հոգածութիւն պիտի ունենայ: Եւ անոնք որ Ա. Գլխի տամբերը ունին իրենց քով, մինչև վերջին Գլխը շնորհելով հանդերձ իրենց պիտի զրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքիի մէջ Պ. ԳՕԵՕ-ՄՕԹԻ Պանքան:

Սոյն տամբերէն կը ծախուին նաև իմուքի, Տիար Գ. Պալլադիանի խանութին:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տամբերու գները:

Համարակցի՝ Գլխ. իւրաքանչիւրը 131)247ն — ամբողջ 96:

Պրոնսվիկ՝ 6 Գլխ. իւրաքանչիւրը 16գրուէն — ամբողջ 96:

ԻՄԱՆՕԹ. — Հուսարական տուններու Ա. Գլխի թիւերը արդէն հասած են և հրատարակ ելած: 6 — 8

ԿՈՊԷՌՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասնեկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբայր տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատուն մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Լօզդիկի յիշ Շարխա Գամմէջ Օթիլ ՇէֆէրՏՍԻ ճիւղ գիմաց թիւ 3 արարթրմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրդ կուտաներ ի հարկին:

Ակրակալութեան բնական մեծութեամբ կենդանագիրներով արհեստի մեքենայով որոնք երբէք չեն աւրուիր:

Գոհնաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով ձիւնեպիրտ, Իւրդնեքի և ջրաներկ պատկերներ և շէն: Լուսանկարատեսանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի որքա՞նչ ճեղքորդութեան եւ շէն:

Իրեն գիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէջ:

Տ Հ Ի Մ Ի Չ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Յ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ՍԵՐԱՐԷՐ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ՊԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է:

Ս. ԼէՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

ՏՕՐԹ. Ա. Յ. ԳԵՐԵՍՊԻՃԵԱՆ

Ի Շարխա Գոր-Պեյ, քիւ 20

Իր ՉԻԻ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուղարկեալ օրերը կես օրէ առաջ ժամը (ք. և.) 9 էն 11 սրոշած ըլլալով կը լինորէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիմել ուղղու աղքատ հիւանդներու: 3—8

ՏԻՐԱՆ ՀԻՒՄՈՒԳԵԱՆ

Շարա Մօհսուկէ Այիվիգորիա ղեդարանիկ քով:

Իրեն գիմող յաճախորդաց, տողուն ապրանքներով և նորածնութեան համաձայն, ձեւուր հարուստներ պատրաստել կը խոստանայ խիստ չափաւոր գներով:

Փորձի համար անգամ մը միայն հան գիմողը, սրտի գոհունակութեամբ պիտի մեկնի և ճաշակաւոր ու ձեւուր զգեստ ունեցալու համար՝ գարձեալ Հիւրմիջեանը պիտի փնտռէ: 3—8

ԳՐԻՔ ՈՐՁՈՂ ՆԵՐՈՒՑ

Գահիրէի և չրվակայից գրասէր Հայ հասարակութեան գիւրութիւն մը տալու մտօք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Խաւսական, Գրքոցական, Գիտական, Գրական Արուեստական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Գիւլիքիլ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է գիւրամատակցի պարաններով ձեռք բերել գիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալտեան վարժարան Հայոց ի Գահիրէ:

ՏՕՐԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԱՏԱՄԵԱՐՈՑԹ

Ապրիլի Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակուաններ:

Կը գաղթեցնէ վայրկեանագէս սկոլայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի մոմն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն տակունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում, ամեն օր կ'եսօրէ ետք ժամը 3—5:

ՀԷԼՎԱՆԻ ՎԻՍԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 25 ՄԱՅԻՍ 1900

7210	2370	4211	6805	3764	413
977	1599	2259	2116	2693	2962
3120	4584	5414	5389	5882	6281
6517	6689	7334	8122	8042	8946
	8143	9287	9027		

Տպագրութիւն ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ